



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

24 մայիսի 2018 թվական N 31-Ա

ԿԱՐԵՆ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2006թ. հունիսի 26-ի «Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով գործուղելու կարգը սահմանելու մասին» թիվ 546-Ն որոշմամբ սահմանված N 1 հավելվածի 8-րդ և 9-րդ կետերով՝

կարգադրում եմ .

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Կարեն Նազարյանին ս/թ հունիսի 6-ից հունիսի 8-ը գործուղել Երևան «Հ պետական կառավարման ակադեմիա՝ ՀՀ ՔԾԽ 2018թ. 223-Ա որոշմամբ հաստատված ծրագրով վերապատրաստման դասընթացներին մասնակցելու:

2. Հանձնարարել ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ կատարել վճարում:

Հ. ԱՐՈՎՅԱՆ



2018թ. մայիս 24
ք. Իջևան